Պարույր Սևակ

Վառեցեք լույսերը

Երազել է տալիս մութը,
Իսկ երազել մենք չենք ուզում:
Մենք ուզում ենք
Սին երազի երկար կապը քաշե՛լ-քաշե՛լ
(Ինչպես երկար թել ունեցող փուչիկների
Թելն են քաշում մանուկները),
Սին երազի կապը քաշե՛լ
Ու ձգելով բերել նրան
Նստեցընել մեր ծնկներին՝
Մեր խաղացող աղջկա պես,
Եվ նայելով
Նրա լպիրշ ու խլրտուն աչքերի մեջ՝
Համբերահատ և բարկացած արուի պես նրան բիբել.
-Խո՛սքդ ասա. այո՛ կամ ո՛չ...
Որովհետև չունենք այսքան հանդգնություն,
Որովհետև համբերահատ ու բարկացած արուներ չենք.
Որովհետև սեր խաղացող աղջկան մենք
Չե՛նք զորելու նստեցընել մեր ծնկներին.
Որովհետև երկար թելով փուչիկ ունեն
Մանուկնե՛րը, բայց ո՛չ թե մենք.
Որովհետև երազել է տալիս մութը,

Իսկ երազել մենք չենք ուզում,
-Շո՛ւտ, վառեցե՛ք լույսերն ամեն...

03.XI.1963թ.
Երևան